# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

## <<ՀՀՏՄ-ԲՄԱՇՁԲ-26/02>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ք. Իջևան << 19>> մայիսի 2026թ.

ժամը 12:00

**Մասնակցում էին.**

Միսակ Մելքումյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

**Անդամներ՝** Աղաբեկ Գալստյան- Հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Սիրանուշ Չիբուխչյան- Հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Աննա Մանգասարյան -Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

1. <<ՀՀՏՄ-ԲՄԱՇՁԲ-26/02>> ծածկագրով գնման ընթացակարգը կասեցված էր մրցույթի մասնակից «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ և «Էլա Շին» ՍՊԸ ՀԳ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշիքը ճիշտ կազմված լինելու հանգամանքը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կարծիք-պարզաբանում ստանալու նպատակով:
2. Մասնակիցների հայտերը բացվել են 27.04.2026թ. և ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **ՀՎՀՀ, էլ. հասցե** | **Չափաբաժնի համարը** | **Ներկայացված գնային առաջարկը, առանց ԱԱՀ/ ՀՀ** դրամ | **Ներկայացված գնային առաջարկը, ներառյալ ԱԱՀ/ ՀՀ** դրամ | **Նախահաշվային գին** /ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վեհ Իշխանասար ՍՊԸ | 09809845, afoyan73@mail.ru | 1 | 132 230 000 | 158 676 000 | 161 918 056 |
| 2 | ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ ՍՊԸ | 07403208,stepannoem@mail.ru | 1 | 122 500 000 | 147 000 000 | |
| 3 | Վի Քեյ Գրուպ | 01312947, vkgroup2021@mail.r | 1 | 112 500 000 | 135 000 000 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ ՀԳ | ս, 08423013, viktorkosyan@yahoo.com | | | | |

Մասնակիցներից Վի Քեյ Գրուպ ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ ՀԳ-ի հայտի ապահովման համար ներկայացրած բանկային երաշխիքը կազմված է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ համաձայն Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետում ներկայացված է 2.3 պարբերությամբ, որն ունի հղում << *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:*>> Մասնակցի կողմից հայտի ապահովման բանկային երաշխիքի մեջ որպես պրինցիպալ նշվել է համատեղ գործունեության պայմանագրով սահմանված գործընկեր 1-ը, պետք է նշված լիներ համատեղ գործունեությունը, քանի որ այն չի հանդիսանում միայն «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի գնման ընթացակարգի մասնակցությունից բխող պարտավորությունների կատարման ապահովում:

Մյուս մասնակիցների հայտերը կազմված են Հրավերի պահանջներին համապատասխան :

***ՀՀՏՄ-ԲՄԱՇՁԲ-26/02*** ծածկագրով **“ՀՀ Տավուշի մարզի Բագրատաշենի դպրոց տանող ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների” ձեռքբերման մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքներից ելնելով և հիմք ընդունելով օրենսդրության պահանջները (04.05.2017թ. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետ) և հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական պարզաբանումը, գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները.**

1. **Մերժել Վի Քեյ Գրուպ ՍՊԸ և Էլա Շին ՍՊԸ ՀԳ-ի հայտը:**
2. **Ընտրված մասնակից է համարվում Լևոն երկրորդ ՍՊԸ-ն, մյուս մասնակիցը՝ չընտրված:**
3. **Պայմանագիր կնքելու որոշումը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում:**
4. **Անգործության ժամկետի ավարտից հետո չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու մասին:**

**Հանձնաժողովի անդամներ.**

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մելքումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գալստյան

Ս. Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան